<< ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ․ 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ
ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա -------- Երաժշտություն

Մասնակից ------Ագապի Մադոյան

Ղեկավար ------- Հռիփսիմե Խրիմյան

Թեմա ------------- Արտադասարանական միջոցառումների դերը սովորողների արժեքային համակարգի և գեղագիտական ճաշակի զարգացման գործում

-2022 թ․ -

Դպրոցականը անհատ է, որը ցանկանում է որևէ
գործունեության մեջ աչքի ընկնել: Եթե որևէ մի առարկայի կամ
մի որևէ բնագավառում ակտիվ է, ապա երեխան անպայման
փորձում է ներկայացնել իր ես-ը: Սակայն ոչ միշտ է, որ
կարողանում է լիարժեք ճանաչել իր հնարավորություններն ու
ունակությունները, լինել համարձակ՝ հասարակության մեջ
իրեն կատարյալ դրսևորելու համար: Ուստի, ինչպես նշել է մեծ
մանկավարժ Սուխոմլինսկին << Չ ի  կ ար ե լ  ի  փո ք ր ի կ
մ ար դ ո ւ  հ ո գ ե կ ան  աշ խար հ ը  հ ան գ ե ց ն ե լ  մ ի այ  ն
ո ւ ս մ ան :  Եթե  մ ե ն ք  ձ գ տե ն ք  այ  ն  բ ան ի ն , ո ր
ե ր ե խայ  ի  հ ո գ ո ւ  բ ո լ ո ր  ո ւ ժ ե ր ը  կ լ ան վ ե ն
դ աս ե ր ո վ , կ յ  ան ք ը  ն ր ա հ ամ ար  կ դ առ ն ա
ան տան ե լ ի :  Նա պե տք  է  լ ի ն ի  ո չ  մ ի այ  ն
դ պր ո ց ակ ան , այ  լ  և  ամ ե ն ի ց  առ աջ  մ ար դ , յ  ո ւ ր
բ ազ մ ակ ո ղ մ ան ի  հ ե տաք ր ք ր ո ւ թյ  ո ւ ն ն ե ր ո վ ,
պահ ան ջ մ ո ւ ն ք ո վ , ձ գ տո ւ մ ն ե ր ո վ  >>:  Ան շ ո ւ շ տ
մ ե ծ  է  մ ի ջ ո ց առ ո ւ մ ն ե ր ի  դ ե ր ը , ո ր ո ն ք  կ ար ո ղ  ե ն
ս ե ր  և  ձ գ տո ւ մ  առ աջ աց ն ե լ  դ ե պի  ո ւ ս ո ւ մ ն ակ ան
գ ո ր ծ ը ն թաց ը :  Աշ ակ ե ր տն  այ  դ
մ ի ջ ո ց առ ո ւ մ ն ե ր ի ց  պե տք  է  բ ավ ար ար վ ած  և
ի ն ք ն ագ ո հ  լ ի ն ի , այ  ն  է՝  մ ի ջ ո ց առ ո ւ մ ը  պե տք  է
հ ամ ապատաս խան ի  աշ ակ ե ր տի  զ գ աց մ ո ւ ն ք ն ե ր ի ն ,
ապր ո ւ մ ն ե ր ի ն :  Մի ջ ո ց առ ո ւ մ ն ե ր ը  դ առ ն ան
դ պր ո ց ակ ան ի  բ ազ մ ակ ո ղ մ ան ի  զ ար գ աց մ ան  ո ւ
դ աս տիար ակ ո ւ թյ  ան  մ ի ջ ո ց , աշ ակ ե ր տը  լ ի ն ի
մ ի ջ ո ց առ մ ան  առ աջ ատար ն  ո ւ  պատաս խան ատո ւ  ն :
Որ պե ս զ ի  աշ ակ ե ր տն  ապագ այ  ո ւ մ  ի ր ե ն  զ գ ա
պե տո ւ թյ  ան  ք աղ աք աց ի , դ ե ռ  դ պր ո ց ակ ան
տար ի ն ե ր ի ց  ն ր ա մ ե ջ  պե տք  է  ձ և ավ ո ր ե լ
ի ն ք ն ո ւ ր ո ւ յ  ն ո ւ թյ  ո ւ ն  և  ն ախաձ ե ռ ն ե լ  ո ւ
կ ար ո ղ ո ւ թյ  ո ւ ն , ո ր ո ն ց  կ ն պաս տե ն  ն աև

ար տադ աս ար ան ակ ան  բ ազ մ աբ ն ո ւ յ  թ
մ ի ջ ո ց առ ո ւ մ ն ե ր ը :  Իս կ  վ ե ր ջ ի ն ն ե ր ս
կ ձ և ավ ո ր վ ե ն  ար տադ աս ար ան ակ ան
մ ի ջ ո ց առ ո ւ մ ն ե ր ի  ժ ամ ան ակ :

Ան հ ր աժ ե շ տ է  հ ամ ապատաս խան  մ ի ջ ավ այ  ր
ս տե ղ ծ ե լ  աշ ակ ե ր տն ե ր ի
հ ե տաք ր ք ր ո ւ թյ  ո ւ ն ն ե ր ի  ձ և ավ ո ր մ ան



ի ն ք ն ադ ր ս ե վ ո ր մ ան  հ ամ ար :  Ար տադ աս ար ան ակ ան
մ ի ջ ո ց առ ո ւ մ ն ե ր ը  այ  ն  կ ար և ո ր  ազ դ ակ ն ե ր ն  ե ն ,
ո ր ո ն ք  ն պաս տո ւ մ  ե ն  աշ ակ ե ր տն ե ր ի  ազ ատ,
ան կ աշ կ ան դ  ար տահ այ  տմ ան ը :  Ու ս տի  տվ յ  ալ
առ ար կ ան  դ աս ավ ան դ ո ղ  ո ւ ս ո ւ ց չ ի  ն պատակ ը  պե տք
է  լ ի ն ի  ն աև  ար տադ աս ար ան ակ ան
մ ի ջ ո ց առ ո ւ մ ն ե ր ի ն  աշ ակ ե ր տն ե ր ի ն
ն պատակ ամ ղ ե լ  ս տե ղ ծ ագ ո ր ծ ակ ան
գ ո ր ծ ո ւ ն ե ո ւ թյ  ան :  Ու ս ո ւ ց ի չ ը  պե տք  է  ն պաս տի
աշ ակ ե ր տն ե ր ի  ի ն ք ն ադ ր ս և ո ր մ ան  ո ւ
ի ն ք ն աի ր աց մ ան ը , ս ո ց ի ո ւ մ ի  ո ր դ ե գ ր մ ան ը ,
ս ո ց ի ո ւ մ ի ն  ան դ ամ ագ ր մ ան ը :  Մի ջ ո ց առ ո ւ մ ն ե ր ը
պե տք  է  հ ագ ե ց ած  լ ի ն ե ն  ո չ  մ ի այ  ն
բ ո վ ան դ ակ ո ւ թյ  ամ բ , գ ե ղ ար վ ե ս տակ ան
ձ և ավ ավ ո ր մ ամ բ , այ  լ  ն աև  հ ե տաք ր ք ի ր
ն ե ր կ այ  աց ո ւ մ ն ե ր ո վ ,
բ ան աս տե ղ ծ ո ւ թյ  ո ւ ն ն ե ր ո վ , գ ե ղ ե ց ի կ  և
ար տահ այ  տի չ  խո ս ք ե ր ո վ , ե ր գ ե ր ո վ , պար ե ր ո վ :
Այ  ս  ամ ե ն ը  ն պաս տո ւ մ  է  ն ր ան , ո ր  աշ ակ ե ր տի
հ ամ ար  ար տադ աս ար ան ակ ան  մ ի ջ ո ց առ ո ւ մ ն ե ր ը
լ ի ն ո ւ մ  ե ն  ց ան կ ալ ի  և  ս պաս վ ած :

Բայց պետք է դիտարկենք այն փաստը, որ ժամանակակից դպրոցներում գերազնահատվում է ուսումնական գործընթացը՝ ետին պլան մղելով արտադասարանական միջոցառումները: Սակայն, ուսումնական գործընթացին զուգահեռ պետք է նաև կազմակերպվեն արտադպրոցական միջոցառումները իրենց բազմաբնույթ ձևերով: Սովորաբար արտադպրոցական միջոցառումների պլանը կազմում է տվյալ դասարանի դասավանդող ուսուցիչը:

Միջոցառման պլանը պետք է հագեցած լինի թե՛ ժամանակակից երգերով և թե՛ ժողովրդական, ազգային կամ ժամանակակից պարերով: Միջոցառումներն էլ ավելի են գեղեցկանում, երբ այն համեմված է լինում երաժշտական համարներով, ուստի, արտադասարանական միջոցառումների կազմակերպման հարցում, նաև մեծ է երաժշտության ուսուցչուհու դերն ու նշանակությունը, ուսուցիչը պետք է իմանա, թե տվյալ միջոցառման բնույթին



համապատասխան ի՞նչ երգեր, պարեր կամ մեղեդիներ ներառի և ընդգրկի այնպիսի աշակերտների, որոնք ակտիվ են, աշխույժ և ոչ միայն, ուսուցիչը պետք է հաշվի առնի երեխայի խառնվածքը, բնավորությունը, շփումը երեխաների հետ: Ինչպես Մակարենկոն է նշել << Դաստիարակը պետք է ունենա սանի առողջության պատկերը, միշտ իմանա, թե ինչ ուղղությամբ է շարժվում նրա բնավորությունը, ինչ հետաքրքրություններ

ու հակումներ, տաղանդներ և
ընդունակություններ ունի նաև ո՞րն է
անհրաժեշտ զարգացնել >>: Ուստի
միջոցառումների ժամանակ պետք է
առաջատարները, կազմակերպիչներն ու
աշակերտները լինեն պատասխանատու,
համապատասխան աշխատանքը նպատակամետ,
անթերի կատարելու համար:

Մասնակցելով միջոցառումներին, զարգանում է
աշակերտի աշխարհայացքը, բանավոր խոսքը, իսկ
ինքնուրույնության ձևավորմանը նպաստում է
այն փաստը, որ աշակերտը ցանկանում է ինքը
դառնալ միջոցառման կազմակերպիչ կամ
օգնական: Աշակերտը յուրաքանչյուր
միջոցառման ժամանակ անհատապես և յուրովի
կարող է ներկայանալ: Այդ ժամանակ
ուսուցիչը կարող է նկատել աշակերտի մեջ
կազմակերպչական այն հատկանիշներն ու
որակները, որոնք դասապրոցեսի ժամանակ չեն
բացահայտվում: Նպատակահարմար է, որ
միջոցառումների թեմաներն աշակերտները
ընտրեն ուսուցիչների հետ
փոխհամաձայնեցված, որպեսզի
հետաքրքրություն դրսևորեն միջոցառման
նկատմամբ: Բնականաբար, արտադասարանական
բազմաբնույթ միջոցառումները, որոնց
նախաձեռնողները և կազմակերպիչները կլինեն
աշակերտները, իսկ ուսուցիչները ընդամենը
խորհրդատուի կարգավիճակ կստանձնեն և
սաների մեջ կձևավորեն ինքնիրացման ու
ինքնադրսևորման առավել ազնույն ջանքեր
գործադրելու գործընթաց և

պատասխանատվության զգացում:
Աշակերտներից յուրաքանչյուրն
առավելագույն

-3-

հնարավորություններով իրեն կդրսևորի, որովհետև պատասխանատու կլինի ամեն մի թերության կամ ոչ լիարժեքության համար, որի արդյունքում կձևավորվի թիմ, որը միահամուռ ուժերով պատասխանատու կլինի ստանձնած, նախաձեռնած միջոցառման համար: Ցավոք սրտի մեր օրերում ցանկացած միջոցառման նախաձեռնողը, պլանավորողը հիմնականում ուսուցիչն է լինում, կամ էլ կազմակերպչական գծով փոխտնօրենը: Աշակերտները հանդես են գալիս, որպես կատարողներ, ըստ հանձնարարված դերերի, բայց լինում են նաև դեպքեր, որ աշակերտը հրաժարվում է մասնակցել միջոցառմանը և իր կատարած դերով հագեցնել այն, այս դեպքում ուսուցչի դերը շատ մեծ պետք է լինի այս գործում, վերջինս պետք է հետաքրքրություն և սեր առաջացնի դեպի միջոցառումը, որն էլ կնպաստի որակյալ և բովանդակային և որակյալ կազմակերպելու համար: Այս դեպքում աշակերտը պասիվ կարգավիճակից կդառնա ակտիվ նախաձեռնող և յուրաքանչյուրը իր հնարավորությունների և ունակությունների սահմաններում կդրսևորի իր անձնային դրական որակները, այն է` լիարժեք ինքնիրացում կլինի: Ուսուցիչը հանդես կգա օգնողի, որպես հավասարը հավասարի, այլ ոչ թե թելադրողի ու հրամաններ արձակողի իրավիճակում: Արդյունքում

նախաձեռնողն ու իրականացնողները աշակերտները կլինեն, որն էլ կնպաստի վերջինների մեջ հետաքրքրություն ու սեր ձնավորելուն դեպի միջոցառումը:

Յանկացած միջոցառում ունի նպատակ, խնդիրներ, ընթացք և ավարտ: Որքանով են այս պահանջները պահպանվում միջոցառման ժամանակ, որքանո՞վ է տվյալ միջոցառման թեմատիկան բխում աշակերտների հոգուց, ի՞նչ նպատակներ են իրականացնում նման միջոցառման ժամանակ, ի՞նչ սովորեցին ու ի՞նչ վերհիշեցին աշակերտները՝ ելնելով միջոցառման խորագրից:



Յանկացած զարգացած հասարակության պահանջն է, ոչ միայն

հարուստ գիտելիքներով օժտված սերունդ ունենալ, այլ նաև դաստիարակված: Իսկ ըստ Ա. Մանուկյանի՝ <<Դաստիարակությունը ամենատարբեր աղբյուրներից մարդուն ուղղված ներգործություններից առաջացած նրա մտածական և պրակտիկ գործունեության շնորհիվ նրանում կայացող բազմաբնույթ փոփոխությունների գործընթացն է>>: Իսկ որքանով ենք մենք նպաստում, որ արտադասարանական միջոցառումների միջոցով աշակերտների մտածական և պրակտիկ գործունեությունը զարգանա, եթե վերջինս ընդամենը կատարողի կարգավիճակում է:

Միջոցառումներն օգնում են աշակերտներին լինել ինքնուրույն, ինքնավստահ, եթե միջոցառման թեման ընտրվում, պլանավորվում և կազմակերպվում է ուսուցիչ-աշակերտ փոխհամաձայնությամբ, ապա միջոցառման արդյունքը լինում է գերազանց: Այս դեպքում աշակերտին հասանելի է լինում տվյալ միջոցառման նպատակը և իր անելիքը: Այդ դեպքում աշակերտը հաճույք կստանա տվյալ միջոցառմանը մասնակցելով, կոգևորվի և իր հնարավորությունների սահմաններում կփորձի ինքնադրսևորվել: Շատերը կարծում են, որ երեխաներին ավելի շատ մտերմացնում և կրթում են էքսկուրսիաները, այլ ոչ թե արտադասարանական միջոցառումները, անշուշտ, էքսկուրսիաները մտերմացնում, է՛լ ավելի ջերմացնում և ընկերացնում են միմյանց հետ, բայց կա այսպիսի ոչ հաճելի մի փաստ, այն երեխաները, ովքեր ֆիզիկական արատ ունեն, չեն կարող մասնակցել էքսկուրսիաներին, այս դեպքում նրանք մնում են պասիվ կարգավիճակում, իսկ արտադասարանական միջոցառումներում նրանք ընդգրկվում են և իրենց զգում հասարակության լիարժեք անդամ: Տարբեր տեսակի միջոցառումները չափազանց կարևոր են, որովհետև վերջիններիս միջոցով ուսուցիչները կարողանում են ի հայտ բերել երեխաների թաքնված ունակությունները, իրականացնել աշակերտների



միջոցով ներդպրոցական մրցույթներ, որպեսզի սովորել ու մոտիվացիալ ինի: Դպրոցը, բացի

կրթելուց և դաստիարակելուց, պետք է միջոցառումների միջոցով աշակերտին ներգրավի դպրոցական կյանք:

Միջոցառումներ կազմակերպելու ընթացքում, պետք է հաշվի առնենք աշակերտների նպատակներն ու ցանկությունները, միջոցառումներ կազմակերպելու ժամանակ, նրանց դիտարկենք իբրև ձևավորված անձ և հնարավորություն տանք ինքնադրսևորվելու որպես գործընկեր ու հարգենք վերջիններիս << ես-ը >>, այլապես կստացվի մի իրավիճակ, որի մասին մտորում են շատ աշակերտներ, բայց չեն արտահայտվում:

Լինում են նաև հակասական կարծիքներ, արտադասարանական միջոցառումների մասին արված աշակերտների կողմից. օրինակ 8-րդ դասարանի Ն. Գ-ն գրել է << Իմ կարծիքով միջոցառումները անիմաստ բաներ են, որովհետև դպրոցներում հիմնականում կազմակերպվում են դասղեկների կամ ուսուցիչների միջոցով, և հիմնականում մասնակիցները ընտրվում են լավ սովորող աշակերտներից: Անտեսվում են թույլ կամ միջակ սովորող աշակերտները: Միջոցառման ժամանակ չէ՞ որ բոլորն են հավասար: Մի՞թե համեմատաբար թույլ սովորող աշակերտը չի կարող լավ երգել, պարել կամ արտասանել >>:

Մենք կիսում ենք աշակերտուհու մտահոգությունը, որովհետև միջոցառումների շնորհիվ շատ ուսուցիչներ փորձում են նկատելի դարձնել այսպես կոչված իրենց

սիրել ի աշակերտներին, հաշվի չառնելով
նրանց կազմակերպչական շնորհքները: Ինչպես
ընդունված է, իրենք կազմում են միջոցառման
պլանը և իրենք էլ ընտրում աշակերտներին:
Արդյունքում՝ մեծ թվով աշակերտներ կամ չեն
ցանկանում մասնակցել միջոցառմանը կամ էլ
հիասթափված ու անտարբեր հեռանում են նման



միջոցառումներից: Վերը նշվածիս
հավաստիացումն է 12-րդ դասարանի
աշակերտուհի Ա. Վ. -ի մտորումները <<Իմ
կարծիքով, միջոցառումները ներդպրոցական
կյանքում մեծ դեր ունեն: Միջոցառումների
շնորհիվ յուրաքանչյուր աշակերտ
ձևավորվում է որպես անհատ, դառնում է ավելի
ինքնուրույն, պատասխանատու և
կազմակերպված: Միջոցառումների շնորհիվ
աշակերտները կտրվում են իրենց
համակարգիչներից և բջջայիններից,
աշակերտների միջև ստեղծվում է ջերմ
հարաբերություններ, դառնում են ինքնավստահ
և հարկ եղած պահին կարողանում են
ինքնադրսևորվել >>:

Հիմա մեզ շատ պարզ է, թե ինչքան կարևոր են այս
արտադասարանական գործունեությունը
աշակերտի կյանքում, եթե այն կազմակերպված
լինի լիարժեք և առանց անհատի տարբերակման՝
ըստ իր ունեցած գիտելիքի: Իսկ ի՞նչ է
արտադասարանական գործունեությունը: Այս
հարցի պատասխանն արդեն իսկ պարունակվում է
հենց սահմանման մեջ: Սադաս չէ, դպրոցական

պարտադիր դաս չէ: Իսկզբանե ենթադրվում էր, որ միջոցառումն ինքնին պետք է անցկացվի դասասենյակի պատերից դուրս: Այսինքն՝ << արտադպրոցական գործունեություն >> հասկացությունը ներառում է իր մեջ՝ էքսկուրսիաներ, ճամփորդություններ, այցելություններ թատրոններ, թանգարաններ, տարբեր մակարդակներում անցկացվող օլիմպիադաներ:

Այսօր արդեն այնքան էլ կարևոր չէ, թե կոնկրետ որտեղ է տեղի ունենում միջոցառումը՝ հայրենի դասարանում, թե հարևան դպրոցում: Արտադասարանական գործունեությունն այն գործունեությունն է, որը ներառված չէ դպրոցական ծրագրում: Սա դաս չէ, սա նրա հիմնական առանձնահատկությունն է: Իսկ ո՞րն է հիմնական տարբերությունը արտադասարանական գործունեության և դասի միջև:



Դասերին հաճախելը, առաջադրանքների կատարումը դասարանում և տանը, ուսուցչի հարցերին պատասխաններ տալը և դրա համար գնահատական ստանալը՝ այս ամենը յուրաքանչյուր աշակերտի պարտականությունն է: Արտադասարանական միջոցառումներին մասնակցում են միայն հետաքրքրվողները: Մասնակցել կամ մնալ պարզ դիտորդ <<դասից դուրս >>՝ սա նաև յուրաքանչյուր երեխա և դեռահաս ինքն է

որոշում: Հաճախ դպրոցում անցկացվում են
այնպիսի արտադասարանական միջոցառումներ,
որոնք նախատեսված են ողջ թիմի համար:
Այդպես են անվանում՝ դպրոցական:
Այնուամենայնիվ, մանկավարժը չի կարող
պարտադիր մուտքագրել նրանց
այցելությունը:

Մանկավարժների և ուսուցիչների խնդիրն է
ստեղծել արտադասարանական միջոցառման
սցենարն այնպես, որ աշակերտները դրանով
հետաքրքրվեն և կարիք չունենան ստիպողաբար
ներկագտնվել նիստերի դահլիճում; այլ սիրով
ներկագտնվեն և բայել են այն: Սցենարը
կազմել իս, ուսուցիչը իր առջև պետք է դնի
այնպիսի նպատակ, ինչպիսիք են ուսուցումը և
կրթությունը: Աշակերտները յուրաքանչյուր
նման միջոցառման ժամանակ պետք է սովորեն
ինչ-որ նոր բան, ձեռք բերեն օգտակար
գործնական հմտություն, որն ուղեկից կլինի
իրենց ամբողջ կյանքում: Նման
միջոցառումները խթանում են դպրոցական
առարկաները ավելի խորը սովորելու
ցանկություն և ոչ միայն, այն պետք է օգնի
բացահայտել աճող անհատականության
ստեղծագործական ներուժը, մասնակիցները
ավելի լավ ճանաչեն միմյանց, նպաստի
երեխաների միջև բարեկամության առաջացմանն
ու ամրապնդմանը, սովորեցնի նրանց ապրել և
աշխատել այդ թիմում: Արտադասարանական
գործունեության ժամանակը չպետք է համընկնի
դպրոցական ժամերի հետ:

Ծրագրային դասերից դուրս դասերի համար շատ տարբերակներ կան, համերգների պատրաստում, ներկայացումների բեմադրում, այս ամենը նպաստում է նրան, որ աշակերտը ստանա նոր գիտելիք, լինել բարի և հանդուրժող: Ահա թե ինչպիսի ներգործիչ ուժ ունի երաժշտական արտադասական միջոցառումները աշակերտի կյանքում:

Երաժշտությունն արվեստի այն տեսակն է, որը գրավում է բոլոր տարիքի երխաներին: Երաժշտության կիրառումը անհրաժեշտ է բոլոր միջոցառումների ժամանակ, երաժշտությունը զարգացնում է երեխաների ներքին և արտաքին լսողությունը, ռիթմի և տեմբրի զարգացումը, մեղեցու ունկնդրման և վերարտադրման ունակությունը:

Միջոցառումների ընթացքում կատարվող երգերի ցանկում է նաև ընդգրկվում հայոց մեծերի բանաստեղծությունների հիման վրա գրված երգերը: Ինչքա՛ն գեղեցիկ է, երբ երեխաները կատարում են Հ. Թումանյանի, Ղ. Աղայանի, Ա. Խնկոյանի, Ս. Մուրադյանի և այլոց բառերով գրված երգերը:

Երգը ոչ միայն զվարճացնում է և օգնում հաղթահարելու հոգեկան ծանր ապրումները, այլ նաև նպաստում է բանավոր խոսքի զարգացմանը, գործնական գիտելիքների հարստացմանը:

Արտադասական միջոցառումների ժամանակ, թատերականացված խաղերի, տարբեր բեմադրությունների ընթացքում երեխաները

միաժամանակ և՛ ունկնդրում են, և՛ կատարում տարբեր երգեր. օրինակ բեմադրությունների նախաբանի, ընթացքի ու վերջաբանի ժամանակ հնչող երաժշտությունը ունկնդրման համար է, քանի որ այն արտացոլում է ներկայացվող ստեղծագործության բովանդակության ընդհանուր տրամադրությունը: Ունկնդրման բնույթ են կրում նաև քայլերգերը, պարեղանակները և որոշ



խաղերգեր, այս երաժշտությունների շնորհիվ է, որ զարգանում է երեխաների ներքին լսողությունը:

Հաճախ միջոցառումների պատրաստման ընթացքում աշակերտը փորձում է վերարտադրել ցանկացած մեղեդի, բնականաբար, նման վերարտադրումը միշտ չէ, որ ճշգրիտ է լինում: Սակայն ուսուցիչը չպետք է անտեսի և անցնի առաջ, այլ հենց տեղում դիտողություն անի այդ երեխաներին վատ երգելու համար: Նա անպայման պետք է տարբերի կատարողական բնույթի երգերն ունկնդրման համար նախատեսված երգերից:

Սովորաբար կատարողական բնույթի երգերը պետք է բաղկացած լինեն երկու կամ երեք քառյակից, առանձնանան թեմատիկ կառուցվածքով: Դրանց տոնայնությունն ու ձայնածավալը պետք է համապատասխանեն երեխաների ձայներին՝ կոկորդը չլարելու նպատակով:

Բառերն ու մեղեդին պետք է իմանան բոլոր երգող երեխաները, անկախ նրանից, նրանք ընդգրկված են այդ երգի կատարման մեջ, թե ոչ, որովհետև միջոցառման ժամանակ լինում են դեպքեր, երբ երեխան երգելու ընթացքում հուզվում է և նրան օգնության են գալիս իր ընկերները: Այսպիսի դեպքերում երեխայի մոտ ավելի է ամրանում վստահությունը դեպի իր անձի նկատմամբ, սա շատ կարևոր է, որպեսզի աշակերտը իրեն ընկճված չզգա և չբարդույթավորվի, չէ՞ որ վերջինս կարող է վատազդել երեխայի հետագա պահվածքի վրա: Երեխան կարող է բարդույթավորվել և հրաժարվել մասնակից լինելու միջոցառումներին:

Երաժշտական կատարողական արվեստի զարգացման գործում կարևոր նշանակություն ունի սկսնակ կատարողի՝ այսպես կոչված «ինքն իրեն լսելու» մշակույթի ձևավորումը: Դա երաժշտական



մտածողության հիմնաքարերից մեկն է: Այդ հմտությունը ձեռք է բերվում երաժշտությունն ունկնդրելու հետևողական աշխատանքի շնորհիվ:

Հայտնի է, որ արվեստը՝ մասնավորապես երաժշտությունը, մեծ նշանակություն ունի անձի համակողմանի զարգացման և նրա արժեքային համակարգի ձևավորման գործում: Այս իմաստով երաժշտությունը բացառիկ է յուրաքանչյուր անհատի կյանքում: Այսինքն

՝ անհնար է երեխայի կյանքը պատկերացնել առանց երաժշտության: Տեսափորձարարական հետազոտություններով հաստատված է, որ չկա անընդունակ երեխա: Պարզապես անհրաժեշտ է ստեղծել մանկավարժական համապատասխան պայմաններ՝ նրանց կարողությունները բացահայտելու և զարգացնելու համար: Որքան բազմաբովանդակ լինի երեխայի երաժշտական դաստիարակությունը, այնքան լայն հնարավորություններ կստեղծվեն երաժշտական ունակությունների զարգացման համար: Դրանց նախադրյալներն ունեն տարաբնույթ պայմանավորվածություն: Այս կամ այն ունակությունը զարգանում է այն դեպքում, երբ ստեղծվում են որոշակի պայմաններ: Սակայն այդ հնարավորությունն անսահմանափակ չէ: Գոյություն ունի որոշակի մակարդակ, որից այն կողմ հազիվ թե հնարավոր լինի ապահովել մարդու առաջընթացը:

Երաժշտական հակումները հոգեբանական բարդ գոյացություններ են, որոնք ի հայտ են գալիս երաժշտական ունակությունների զարգացման ընթացքում: Քրտնաջան աշխատանքի շնորհիվ մեծ հնարավորություններ են ստեղծվում այդ ունակությունների զարգացման համար: Երեխայի երաժշտական տվյալները բացահայտելու և զարգացնելու համար անհրաժեշտ է նախև առաջ նրա մեջ սեր արթնացնել երաժշտության նկատմամբ: Ծնողների հետևողական

ազդեցությունը և նպաստում է երեխայի հոգեկան զարգացման կայացմանը: Ապացուցված է, որ յուրաքանչյուր երեխա ունի որոշակի երաժշտական ունակություններ: Հարկավոր է միայն խնամքով հետևել երեխայի այդ հակումներին և զարգացնել դրանք, պետք է լսել երաժշտության ուսուցչուհու խորհուրդը և չանտեսել այն: Որովհետև երբ երեխան շփվում է երաժշտության հետ կամ սովորում է նվագել որևիցէ երաժշտական գործիքի վրա, այդ դեպքում բարձրանում է նրա գեղագիտական ճաշակը, փոխվում է նրա մտածելակերպը շրջապատի, ընկերների նկատմամբ, իրեն շրջապատող ամեն իր և առարկան ընկալում է յուրովի, կարողանում է ընկալել տարբեր հնչյունների միաձույլ հնչողությունը, այսինքն՝ համահնչունությունը (հարմոնիան) և այդ հնչյունների օգտագործման կարողությունը:

Իսկ այն երեխաները, որոնք օժտված չեն այդ ունակությամ, կարող են երաժշտապես զարգանալ հետևողական մանկավարժական աշխատանքի արդյունքում: Այդ երեխաներին շատ պետք է ներգրավել երաժշտական խաղերի, երաժշտական ներկայացումների մեջ: Երեխան կապվելով երաժշտության կախարդական աշխարհի հետ, նրա մոտ կառաջանա սերը դեպի երաժշտությունը և արդեն ուշադիր կունկնդրի և կհասկանա ցանկացած մեղեդի, իսկ այն աշակերտները, ովքեր ունկնդրման միջոցով մտապահում են մեղեդին, ապա այդ աշակերտների մոտ ամրապնդվում է լավ լսողության հատկանիշները: Մեղեդային լսողության

փորձարկումներ կատարելիս ամենից առաջ ստուգվում են մեղեդու ճանաչման և մտապահման ունակությունները: Դրանք մեղեդային լսողության ամենավառ դրսևորումներն են: Մեղեդային լսողության ունակության մեկ այլ կարևոր պայման է հնչերանգի հստակության զգացողությունը: Այն արտահայտվում է մեղեդու

ճանաչմամբ և հստակ վերարտադրման առանձնահատկությամբ: Բարձրանում է նաև ռիթմի զգացողությունը, ռիթմի զգացողություն



ասելով՝ հասկանում ենք երաժշտական այն հիմնական ունակությունը, որը վերաբերում է ժամանակային հարաբերակցություններին: Ռիթմի ընկալումը սովորաբար ներառում է շարժողական տարբեր դրսևորումներ: Դրանք կարող են լինել՝ գլխի, ձեռքերի, ոտքերի կամ ամբողջ մարմնի շնչառական և խոսքային ապարատների շարժումներ: Այն երեխան, ում մոտ զարգանում է ռիթմի զգացողությունը, այդ երեխան ավելի աշխույժ, ավելի ազատ և գեղեցիկ ձևով է ներկայանում միջոցառման ժամանակ, այսինքն ռիթմի զգացողությունը նաև բարձրացնում է աշակերտի ինքնավստահությունը շրջապատում և իր ընկերների շրջանում: Այսինքն, կարելի է ասել, որ երաժշտական ռիթմը բազմակողմանի հասկացություն է: Ռիթմի ընկալման ռեակցիայի օգնությամբ լավանում է

գլխուղեղի գործունեությունը: Այն պայմանավորված է մարդու նյարդային համակարգով: Ապացուցված է, որ թույլ նյարդային համակարգ ունեցող անձինք ավելի խոր ու նուրբ են զգում և վերապրում երաժշտական ստեղծագործությունների բովանդակությունը: Նրանք նախընտրում են հանգիստ, ոչ բարձր երաժշտություն: Ուժեղ նյարդային համակարգ ունեցողները սիրում են արագ տեմպով, բարձր և տևական հնչողությամբ երաժշտություն:

Նկատի ունենալով այս ամենը, մենք հասկանում ենք, որ արտադասարանական միջոցառումները բարձրացնում են երեխայի գեղագիտական ճաշակը, աշխարհայացքի ընկալումը և սերը դեպի արվեստը: Իմ աշխատանքային գործունեության ընթացքում, ես կատարել եմ հետևյալ խոշոր միջոցառումները, որոնք մեծ ազդեցություն են ունեցել երեխաների աշխարհընկալման վրա, Մարինա Սպենդիարովային նվիրված դաս համերգը անցկացվել է Ալեքսանդր Սպենդիարովի տուն-թանգարանում: Միջոցառման նպատակն էր աշակերտներին ծանոթացնել կոմպոզիտորի ժառանգի հետ, ով մեծ ներդրում է ունեցել տուն-թանգարանի



ստեղծման և կառուցման գործում: Փոքրիկ դրվագներ է ներկայացվել նրա ապրած դժվարին կյանքից: Հեշտ չի եղել նրա համար ստալինյան բռնապետության տարիները, այդ փխրուն և

կյանքով լեցուն արարածը նույնիսկ դաժան աքսորի պայմաններում չի մոռացել երաժշտության մասին, որն էլ եղել է իր փրկության միակ օղակը: Միջոցառման ընթացքում հնչել են երեխաների կատարմամբ այն ռոմանսները, որը շատ սիրել է երգել Մարինա Սպենդիարովան, կատարվել են նաև Ալեքսանդր Սպենդիարյանի ստեղծագործություններից՝ «Այ վարդ» երգ-ռոմանսը, «Միլար բլբուլ» և «Օրորոցային» երգերը: Ընթացքում հնչել են հատվածներ «Երևանյան էտյուդներ» ստեղծագործությունից հատվածներ և բեմադրվել «Էնզելի» պարը: Միջոցառման ներքո, երեխաները սկսեցին հետաքրքրվել և՛ Մարինա Սպենդիարովայի կյանքով, և՛ մեծ կոմպոզիտորի կենսագրությամբ: Նրանք սկսեցին նաև հետաքրքրվել արտադպրոցական ծրագրերում ընդգրկված երգերով:

Կազմակերպվել են միջոցառումներ նվիրված Գեղունի Չթչյանին, Արամ Սաթյանին, Տիգրան Մանսուրյանին, Ռոբերտ Ամիրխանյանին և Ստեփան Բաբաթորոսյանին: Բոլոր միջոցառումների ժամանակ հրավիրվել են տվյալ կոմպոզիտորները և որպես կենդանի լեգենդ ներկայացվել են երեխաներին: Ներկայացնեմ յուրաքանչյուր միջոցառումը և տամ յուրովի բացատրություն:

Հրավիրելով Գեղունի Չթչյանին, նպատակս էր ներկայացնել կոմպոզիտորի այն երգերը, որոնց երեխաները չէին հանդիպել դպրոցական ծրագրերում: Երգերը կապակցել էի այնպես, որ

ստացվել էր փոքրիկ մյուզիքլ, բանաստեղծություններով և երեխաների գեղեցիկ խաղով կոմպոզիտորի մոտ մեծ զարմանք էր առաջացել: Երեխաները նաև իմացան, որ Գեղունի Չթչյանին



դասախոսել էր մեծն կոմպոզիտոր Գրիգոր Եղիազարյանը, ում կենսագրությունը ծանոթացել էին 4-րդ դասարանի երաժշտության դասագրքում:

Արամ Սաթյանին հրավիրեցի, որպես Սաթյանների գերդաստանի կենդանի շառավղի, միջոցառմանը ներկա էր նաև Աշոտ Սաթյանի թոռնուհին՝ Գայանե Սաթյանը: Ցերեկույթի ընթացքում հնչեցին և՛ Արամ Սաթունցի, և՛ Աշոտ Սաթյանի, և՛ Արամ Սաթյանի ստեղծագործություններից: Աշակերտներն իմացան նաև, որ այս գերդաստանը տվել է յոթ կոմպոզիտոր:

Մեր դպրոցի հաջորդ հյուրը տաղանդաշատ կոմպոզիտոր և երեխաներին ավելի ծանոթ Տիգրան Մանսուրյանն էր: Գաղթականի ընտանիքում մեծացած հանճարը իր հայրենի հարկի տակ միշտ լսել ու երգել է ժողովրդական երգեր: Հայրն ու մայրը չեն ունեցել երաժշտական կրթություն, բայց կարողացել են գեղագիտական մեծ ճաշակ ձևավորել իրենց ժառանգների մեջ: Այս միջոցառումը համադպրոցական միջոցառում էր, ընդգրկված էին 2-րդ դասարանից մինչև 9-րդ դասարանի աշակերտները: Նրանք լսեցին ու հմայվեցին

մանսուրյանական երգերով և դյութիչ մեղեդիներով:

Քովիդ, հետո պատերազմ... անորոշություն և վախ:

Այս հոգեվիճակի փոփոխությունը հանել հնարավոր էր միայն մարդկանց սրտերում մշակութային և գեղագիտական ճաշակ ներարկելով: Քանի որ բազմիցս հայ ազգը հայտնվելով աշխարհաքաղաքական ճգնաժամի կենտրոնում, կարողացել է դիմակայել եկեղեցով, մշակույթով, կրթությամբ և հոգևոր սնունդով: Ստեղծված իրավիճակում դեղատոմսն ինձ համար մեկն էր՝ լցնել մարդկանց հոգիները ամիրխանյանական երաժշտական ելևէջներով, Ամիրխանյանական միջոցառումը հագեցած էր նրա մանկական, սիրո երգերով և դասական երաժշտությամբ, երեխաները ոչ միայն երգեցին, պարեցին այլ բեմում ցուցադրեցին



մուլտֆիլմերից հատվածներ: Մուլտֆիլմեր, որոնց հետգրեթե ծանոթ չէին աշակերտները: Նրանք իմացան նաև, որ «Պույ-պույ մկնիկ» մուլտֆիլմում հնչող ջութակի մեղեդին նվագում էր Ռոբերտ Ամիրխանյանի հարազատ եղբայրը:

Եվ մեր վերջին կոմպոզիտորն էր Ստեփան Բաբաթորոսյանը, ում անունն ազգանունը չկա ոչ մի երաժշտական դասագրքում, սակայն նրա գրած երգեր «Ծաղրածուն և ծաղրաձուն», «Կճուճն ու

ճուտը» միշտ լսվում է ռադիոյով և յութուբյան ալիքներով: Այցի նպատակը մեկն էր, մոտիկից ծանոթացնել ստեղծագործողի հետ և նրա այն մանկական երգերին, որոնք երբևիցէ չէին հնչել և չէին ներկայացվել միջոցառումների ընթացքում: Շատ հուզիչ էր Ստեփան Բաբաթորոսյանի և Յուրի Սահակյանի խոսքերով գրված «Նամակ ռազմաճակատից» երգի կատարումը: Երգից առաջ բեմադրել էի երգի բնույթին համապատասխան բեմադրություն: Դահլիճում տիրող մթնոլորտը այնքան հուզիչ էր և այնքան խոսուն, որ բառերով նկարագրելն անգամ ավելորդ էր:

Մի՞թե կարելի է կասկածի տակ դնել արտադպրոցական այս տեսակ միջոցառումները, որոնք բազմիցս արդեն սերունդներ են կրթել ,աշակերտներին դարձրել իրազեկը սեփական մշակույթի: Մեկնաբանությունը թողնում եմ Ձեզ:

Գր ակ ան ո ւ թյ ան ց ան կ


1.Մ ան ո ւ կ յ ան Ս.Պ Ը ն դ հ ան ո ւ ր մ ան կ ավ ար ժ ո ւ թյ ո ւ ն ,<<Զ ան գ ակ -97>> Ե;2005,533:

2.Մ ան ո ւ կ յ ան Մ.Մ; ար տաd աս ար ան ակ ան դ աս տի ար ակ չ ակ ան աշ խ ատան ք ի առ ան ձ ն ահ ատկ ո ւ թյ ո ւ ն ն ե ր ը . Ե.<<Լ ո ւ յ ս >> 1980,147:

3.Սո ւ խո մ լ ի ն ս կ ի Վ.Ա. <<Դ աս տի ար ակ ո ւ թյ ան մ աս ի ն >> Ե. <<Լ ո ւ յ ս >> 1976,253:

4.Мартынов И ,,Золтон Годай"Монография,М.Изд."Советский композитор",1983.